ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«17» մայիսի 2013թ. N 207

ք. Արմավիր

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Բամբակաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2013 թվականի ապրիլի 22-ի N 48, <<Արմավիրի Վ. Բախշյանի անվան N2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2013 թվականի ապրիլի 22-ի N 06 և <<Արմավիրի N9 հիմնական դպրոց>> տնօրենի 2013 թվականի ապրիլի 9-ի գրությունները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010թվականի հուլիսի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին>> N 238 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշմամբ հաստատված հավելվածում՝

ա.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Բամբակաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<6.Պարոնյան Գայանե - ուսուցիչ>> բառերը փոխարինել <<6.Նիկողոսյան Դոնարա- ուսուցիչ>> բառերով:

բ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Արմավիրի Վ. Բախշյանի անվան N2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<6.Կուրղինյան Հրաչ - ուսուցիչ>> բառերը փոխարինել <<6.Սահակյան Վիկտորյա- ուսուցիչ>> բառերով:

բ. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի << Արմավիրի N9 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<6. Այվազյան Գոռ - ուսուցիչ>> բառերը փոխարինել <<6.Սարգսյան Վանիկ- ուսուցիչ բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ